ԳԼՈՒԽ ՃԽ.

Ամենայն թուղթ պարտուց, դաշանաց, վաճառելոց պաշտօնատարութեանց հրովարտակ իշխանութեանց և այլն, պարտէ գրել 'ի վերայ թղթոյն տէրունեան որում ունի նշան գառին։

ԳԼՈՒԽ ՃԽԱ.

Ամենայն ոք 'ի յերեսս երկրին հայոց որ ունի դանդատս պարտ է գրել նմայ 'ի վերայ թղթոյ տէրունեան ձեռամբն ատենաբանի միոյ, և տացէ 'ի տունն դատաստանին աշխարհին իւրոյ, և դատախազն պարտ է պատասխանել նմայ, գրեցեալ 'ի վերայ թղթոյ տէրունեան. և 'ի յամէն կողմանց երկուս-անգամս վիճաբանութիւնս, յետ այնորիկ ընդունեսցի վճիռս իւր 'ի ատենէ դատաստանի 'ի վերայ թղթոյ տէրունեան։

ԳԼՈՒԽ ՃԽԲ.

Ամենայն վճռոյ հատեցեալ 'ի յերեսս երկրին հայոց 'ի տեղիս՝ տեղիս իշխանութենէ դատաստանի ընդ հովանաւորութեամբն տանն հայոց, եթէ ոչ բաւականասցի դանդատող և կամ դատախազ 'ի վճռոյն հատեալ 'ի վերայ իւրեանց, ազատապէս կարէ խնդիրս 'ի տանէն դատաստա-